ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Նոյեմբերի 26-ին Սինոդը լսեց Ղրիմբուլաղի Ծխատէր Յովհաննէս քահանայ Տէր Օհանեանցի ապօրինի կնապահութեան գործը նրա ամուսին Զմռուխ Եաւրեանի մահուանից յետոյ և որոշեց դադարեցնել նրան անորոշ ժամանակով ապօրինի կնապահութեան համար, մինչև որ կապաշխարի և կը հեռացնի տանից իւր հոմանուն և այս մասին հրաման արձակեց Երևանի Կոնսիստորիայի անունով։

Նոյն թուին Սինոդը որոշեց դադարեցնել Սուրմալուի գաւառի Հախվերիս գիւղի քահանայ Տ. Գարեգին Գալըստեանին ինքնագլուխ կատարած թոյլատրելի և անթոյլատրելի պսակների համար երկու ամսով և ուղարկել նրան ապաշխարութեան համար Գեղարդայ վանքը և հրամայեց Երևանայ Կոնսիստորիային լրացնել քննութեամբ, թէ Գարեգին քահանան ոչքան պսակ է կատարել ինքնագլուխ, և թէ ոչքան աթոռապատկան դրամ է պահել ցայսօր իրեն մօտ, և հեռանքի մասին յայտնել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Շուշի քաղաքացի Գրիգոր Առաքելեան Սալանեանցի պսակը Սաթենիկ Յա-

թութիւնեան Աբրահամեանցի հետ խնամութեան չորրորդ աստիճանում խոստութեամբ հանդերձ, և այս մասին հրաման հանեց Ղարաբաղի Կոնսիստորիայի անունով։

Նոյն թուին Սինոդը որոշեց շրջաբերականով հրամայել Կոնսիստորիաներին, որ երբ քահանայք կասկածում են ամուսնացողների չափահաս լինելու մասին, նախքան ամուսնութիւնը պարտաւորապէս մետրիքական քաղուածքներ պահանջեն նրանցից։

Նոյն թուին Սինոդը լսելով Կոթի գիւղացի Յովսէփ Աբովեանցի խնդիրը, որոշեց տալ նրան պատուաւոր քաղաքացիութեան վկայական, որպէս քահանայի թոռան, որի մասին և վկայական ունի, իսկ նրա եղբայրների նոյն մտքով խնդիրը օտար դաւանութեանց դէպարտամենտի 1883 թուի № 1432 համաձայն մերժել, որովհետև նրանց անունը արձանագրուած չէ մետրիքական մատեաններում և նրանք իրենց վկայականը ստացել են երդմնական քննութեամբ։ Նոյն այս վճիռը կատարելու համար հրամանագրեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել Աչոտ Տէր Խաչատրեանի և Յովհաննէս Ղևոնդեանի ձեռնադրութիւնը Կարսի նահանգի Մաղրա գիւղի վրայ, որովհետև գիւղը բաղկացած է 88 տխից և արդէն ունի մի քահանայ։

Նոյեմբերի 29-ին Սինոդը քահանայութեան արժանի համարեց Վարդան Տէր Աստուածատրեանին և որոշեց դիմել Դանձակի պ. Նահանգապետին օրինաւոր հաճութեան համար յիշեալ Վարդանին Հաթերք գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Տաթևի վիճակի Խնձորեսկ գիւղացի Տիգրան Սազանդարեանին և որոշեց դիմել Դանձակի պ. Նահանգապետին օրինաւոր հաճութեան համար նրան Խնձորեսկ գիւղի եկեղեցու վրայ դպիր ձեռնադրելու։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի դատաբ. Բարչալուի գաւառի Դիլաքարակ գիւղի բնակիչ Սարգիս Մարգարեան Մայիկեանցին և որոշեց գիմել Թիֆլիզի պ. Նահանգապետին օրինաւոր հաճութեան համար Սարգսին Դիլաքարակի վրայ քահանայ ձեռնադրելու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Շարուր-Դարալագեազի գաւառի Հասանքէնդ գիւղի բնակիչ Սմբատ Տէր Յովսէփեանին և ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ։

Դեկտեմբերի 3-ին Սինոդը ստանալով Կովկասի տէր Կառավարչապետից տեղեկութիւն, որ ներքին գործոց Նախարարը թոյլատրել է Աղէքսանդրապոլի գաւառի Ղոլզաթ գիւղի եկեղեցու նորոգութիւնը (գր. № 14973 նոյեմբ. 24-ից), հրամայեց Երևանի Կոնսիստորիային ձեռնարկել նորոգութեան՝ Նահանգական իշխանութիւնից հաստատած յատակագծի համաձայն։

Դեկտ. 8-ին Սինոդը լուծեց Բարչալուի գաւառի Շնող գիւղացի Ալէքսան Զիլանի և Թալլու Սահակեանի պատակը և իրաւունք տուաւ Ալէքսանին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը ստացած լինելով օրինական թոյլտուութիւն Երևանի Նահանգի Ղարահամզալու գիւղի եկեղեցու վերանորոգութեան մասին, հրամայեց Կոնսիստորիային ձեռնարկել յիշեալ նորոգութեան։

Նոյն թուին Սինոդը մերժեց Շուշի քաղաքի քահանայից խնդիրը, որով թոյլտուութիւն էին հայցում տարեկան երկ-երկու հոգի Բագու գնալու և այնտեղ փոխադրուած շուշեցիներին հովուելու համար, և յանդիմանեց Դրանց Կոնսիստորիայի միջոցաւ, որովհետև մերձաւոր իշխանութիւնը թողած՝ ուղղակի Սինոդ էին դիմել։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի դատաբ. Շուշուայ գաւառի Աղոխ գիւղի բնակիչ Գրիգոր Տէր Գէ-

գեան Տէր Յակոբեանցին և գիմեց Դանձակի պ. Նահանգապետի օրինաւոր հաճութեան համար յիշեալ Գրիգորին Աղսի գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու։

Սինոդը սաացած լինելով Երևանի գաւառի Թազաքեանդ գիւղի եկեղեցւոյ վերանորոգութեան թոյլտուութիւնը, հրամայեց Երևանի Կոնսիստորիային ձեռնարկել վերանորոգութեան գործին Նահանգական վարչութիւնից հաստատուած յատակագծով։

Նոյն ձևով հրամայուեց ձեռնարկել նաև Նոր Բայազետի գաւառի Դեղալդարա գիւղի եկեղեցու վերանորոգութեան գործին։

Դեկտ. 10-ին Սինոդը թոյլատրեց Գիշի գիւղացի Բախշի Աբրահամեան Բէկլարեանցի պսակը Հռիփսիմէ Յարութիւնեան Վանէսեանցի հետ ազգակցութեան եօթներորդ աստիճանում, որի մասին և հրամանագրեց Ղարաբաղի Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Մամադաձոր գիւղի բնակիչ Աւշար Ալլահվերդեանի պսակը Մարգարիտ Խաչատրեան Միրզայեանի հետ ազգակցութեան չորրորդ աստիճանում և պատշաճաւոր հրաման հանեց Շուշուայ Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Առաքել գիւղի բնակիչ Ալէքսան Աւանէսեան Մինասեանցի պսակը Մինա Հայրապետեան Աւետիսեանի հետ խնամութեան չորրորդ աստիճանում ի մէջ երկու խնամութեանց, և այս մասին հրամանագրեց Ղարաբաղի Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային ընդունել Ախալցխայի բնակիչ Յովհաննէս Գրիկեանին հոգևորականութեան մէջ, և ձեռնադրել քահանայ Ախալցխա քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցու վրայ։

Նոյն թուին Սինոդը Բեսարաբիոյ Կոնսիստորիայի եղբակցութեան համաձայն, լուծեց Նոր-Նախիջևանի բնակիչ Զորչագեան Ղազարոսի և Գեղեցիկ Գրիգորեանի ամուսնութիւնը, և երկուսին էլ զրկեց ամուսնանալու իրաւունքից։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային, յանձնել Կոստանդին քահանայ Աբրահամեանի բողոքի քննութիւնը Ցիրայր վարդապետի դէմ՝ Արշակ քահանայ Մինասեանին, և հետևանքը մատուցանել իրեն։

Նոյն թուին Սինոդը լուծեց Տփխիսի բնակիչ Պետրոս Բաղուրեանի և Նադէժդա Յովհաննիսեանի պսակը և իրաւունք տուաւ Պետրոսեանին նորէն ամուսնանալու։

Դեկտ. 13-ին Սինոդը մերժեց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Կոնսիստորիայի միջնորդութիւնը Թոփտի գիւղի բնակիչ Գէորգ Քէզէճեանի ամուսնալուծութեան մասին, որովհետև լուծելու օրինական պատճառ չը գտաւ։

Նոյն թուին և նոյնանման պատճառներով մերժուեց Երևանի բնակիչ Յովակիմ Սարգսեանի ամուսնալուծութեան խնդիրը։

Նոյն թուին Թելաւ քաղաքի Արշակ Յովհաննիսեանի ամուսնալուծութեան մասին Սինոդը որոշեց պատուիրել Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային առեան հրաւիրել Արշակ Յովհաննիսեանին և ստորագրութեամբ յայտնել, որ օրինաց հատորի առաջի մասի 367 և 368 յօդուածների իմաստի համաձայն, նա կամ նրա կնոջ ազգականները պարտաւոր են երեք տարի շարունակ տեղեկութիւններ տալ պատշաճաւոր իշխանութեան՝ կնոջ խելագարութեան մասին, ներկայացնելով ուր հարկաւոր է բժշկական քննութեան համար, և ապա այդ վկայականները մատուցանել Սինոդին։

Դեկտ. 15-ին Սինոդը որոշեց շրջաբերականով յայտնել բոլոր Կոնսիստորիաներին և ժողովրդոց, որ Վեհափառ

Հայրապետը նոյեմբերի 25-ի № 1480 կոնդակով հաստատել է Երանելի Ներսէս Հինգերորդ Աշտարակեցու 1854 թուին տուած վճիռը ապօրինի կենակցողների մասին, որ կայանում է հետևեալում.

Զրկել ապօրինի կենակցողներին հաղորդութիւնից և եկեղեցական օրէնքներից, քանի որ շարունակում են իրենց գայթակղեցուցիչ վարքը, և եթէ միայն զղջան, արժանացնել վերջին հաղորդութեան։ Այդպէսների մահուան դէպքումն քահանան պարտաւոր է սև փիլոնով լուռ ուղեկցել դագաղին անից գերեզմանատուն, առանց եկեղեցի մացնելու, և գերեզմանատանը միայն «Ողորմած Աստուած» երգելով, յանձնել դիակը հողին և կնքել գերեզմանատունը։

Նոյն թուին Սինոդը մերժեց Ատրպատականի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Դանիել Յարդսեանի և Կատարինէ Աբիմեանի թոյլտուութեան վերաբերութեամբ ազգակցութեան չորրորդ աստիճանում։

Դեկտեմբ. 17-ին Սինոդը լուծեց Վրաստանի և Իմերէթի թեմի Շնող գիւղի բնակիչ Ռէկլար Առաքելեանի և Կատարինէ Առաքելեանի պսակը և իրաւունք տուաւ Կատարինէին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Տիրասպոլի բնակիչ Ստեփաննոս Թորոսեանի և Անթառամ Թորոսեանի պսակը և թոյլատրեց Անթառամին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը մերժեց Թիֆլիզի Թանդոյեան եկեղեցւոյ միաբան Յարութիւն քահանայ Ճուղուրեանի խնդիրը իւր միաբանակիցներից 550 ռուբլու պահանջի մասին, և տեղեկագրեց նրան Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի միջոցաւ։

Դեկտ. 20-ին Սինոդը սկզբունքով որոշեց ենթարկել ռուսահայոց բոլոր թեմերը օրինաւոր բեռիայի իւր անդամների ձեռքով, և այս մասին շրջաբերականով հրամանագրեց թեմական Կոնսիստորիաներին։

Նոյն թուին Սինոդը որոշեց խստիւ պատուիրել ռուսահայոց բոլոր Կոնսիստորիաներին և նրանց ստորադրեալ բոլոր հիմնարկութեանց և պաշտօնեաներին, որ նրանք ինքնագլուխ ոչ մի ծախս չանեն առաջնորդական, փոխանորդական և վարդապետ գործակալների բնակարանների վրայ, այլ նախ թոյլատուութիւն ստանան Սինոդից և ապա նոր դնած իրերը մուծելով առանձին ցուցակները, իւրաքանչիւր անգամ տեղեկագրել Սինոդին, որպէս զի այնտեղ ևս մուծուին Դիւանում գտնուած ցուցակների մէջ։

Նոյն թուին Սինոդը հաստատեց Երևանի Կոնսիստորիայի եզրակացութիւնը Կարս քաղաքի բնակիչ Մկրտիչ Սահակեանի և Հերիքնազ Համբարեանի ամուսնալուծութեան մասին և թոյլատրեց Մկրտիչ Սահակեանին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել Ակկերմանի բնակչուհի Զարուհի Ծէր Օգանէսեանի ամուսնալուծութեան խնդիրը և հրամայեց Բեսարաբիոյ Կոնսիստորիային այս մասին յայտնել խնդրատուին։

Նոյն թուին Սինոդը մեղաւոր ճանաչեց Դօրոյ քաղաքի ս. Ստեփաննոս եկեղեցւոյ միաբան Մկրտիչ քահանայ Արշակունուն Բարսեղ Սոլողեանի և Շաշինկա Մղեբրեանի պսակն անժամանակ կատարելու գործում, և դատապարտեց նրան կիսամեայ ապաշխարութեան իւր եկեղեցւոյ դռան առաջ, որի մասին և հրամանագրեց Վրաստանի և Իմերեթի Կոնսիստորիային։